ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզ, Փամբակ համայնք, Քարաբերդ բնակավայր

14.10.2024թ.

Ս/թ. հոկտեմբերի 14-ին, ժամը 12:00-ին ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի վարչական շենքում տեղի ունեցավ «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ -ի նախաձեռնած ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ փաթեթի վերաբերյալ հանրային լսումը:

Մասնակցեցին՝

Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավար Յու. Շավելյանը, Փամբակ համայնքի ղեկավար Ս. Կոստանդյանը, «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Զախարյանը, «Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ա. Բաղդասարյանը և գլխավոր տնօրենի տեղակալ Ռ. Քոչարյանը, «Ամսաթ» ՍՊԸ-ի, «Մասիս Փլանթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները, ինչպես նաև համայնքի բնակիչները, հասարակական կազմակերպությունների ու լրատվության միջոցների ներկայացուցիչները (մասնակիցների ցանկը կցվում է):

Զեկուցումներ՝

Բացման խոսքով հանդես եկավ Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավար Յու. Շավելյանը.

- Այսօրվա հավաքի նպատակը Քարաբերդի ոսկու հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն ստանալն է, այն այս պահին ազատ է՝ օգտագործող չկա: «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ն կազմակերպել է հանրային լսում, որի ընթացքում կազմակերպիչները կներկայացնեն իրենց կատարելիք աշխատանքը, իսկ բնակիչներդ՝ կարծիքները, որից պարզ կդառնա ձեր դրական կամ բացասական պատասխանը: Վերջում խնդրում եմ ստորագրել մասնակիցների ցանկը, որը ոչ մի պատասխանատվության չի ենթարկում, սրանով դուք չեք արտահայտում նախատեսվող գործողությանը կողմ կամ դեմ լինելը:

Ելույթ ունեցավ Փամբակ համայնքի ղեկավար Ս. Կոստանդյանը.

- Բարև Ձեզ, ուրախ եմ նորից հանդիպելու համար, հիմա ձեզ կներկայացնեմ մեր հաճախակի հանդիպումների պատճառը. սկզբում Քարաբերդի ոսկու հանքավայրը շահագործում էր «Ասսաթ» ՍՊ ընկերությունը, որի հետ ունեցել ենք կայուն հարաբերություններ՝ նրանք օգնել են համայնքին, համայնքն էլ աջակցում էր նրանց: Օրենքով սահմանված կարգով, «Ասսաթ» ՍՊԸ-ն կրկին դիմել էր շահագործման թույլտվությունը երկարաձգելու համար, որի համար նորից կազմակերպվել է 3 հանրային լսում, սակայն 4-րդ լսումը տեղի չունեցավ, որովհետև կար թղթաբանության խնդիր: Այժմ «Ասսաթ» ՍՊԸ-ի շահագործման թույլտվությունը ավարտվել է, և նոր ընկերությունները իրավունք ունեն դիմելու՝ նոր իրավունք ստանալու համար: Այժմ մեզ դիմել է նոր ընկերություն՝ «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ն: Հիմա ներկայացնեմ նրանց՝ «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Զախարյան, որը նաև Արջուտի ոսկու հանքավայրի (այն նույնպես գործում է մեր համայնքում) տնօրենն է: Արջուտի ոսկու հանքավայրը աշխատում է շուրջտարյա ռեժիմով, վճարում է հարկերը, որի արդյունքում էլ առաջանում է համայնքին վճարվող գումարը, այն կազմում է հարկերի 2%-ը, ի տարբերություն որոշ այլ ընկերությունների, ովքեր աշխատում են տարվա մի մասը, վճարումները քիչ են կատարում, ըստ այդմ էլ համայնքի գումարը կրճատվում է: Այժմ լսենք նախաձեռնող ընկերությանը, որից հետո էլ կլսենք ձեզ:

Երկրաբանական ուսումնասիրության Ծրագիրը ներկայացրեց «Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ի՝ նախագծող կազմակերպության, գլխավոր տնօրեն Ա. Բաղդասարյանը.

- Բարև ձեզ համայնքի հարգելի ներկայացուցիչներ:

Ես Արամ Բաղդասարյանն եմ, Գեոէկոնոմիկա ՓԲԸ-ի՝ նախագծող կազմակերպության գլխավոր տնօրենը: Սա մեր առաջին հանդիպումն է, որի նպատակն է ձեզ ներկայացնել Քարաբերդի ոսկու հանքավայրում «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի կողմից նախաձեռնվող երկրաբանական ուսումնասիրությունների Ծրագիրը: Նախագծի հաջող ընթացքի և ձեր համաձայնության դեպքում լինելու է ևս մեկ հանդիպում:

Հանքավայրի տարածքն ունի մոտ 51 հա մակերես, գյուղատնտեսական նպատակով չի օգտագործվում, անտառածածկույթից զուրկ է:

Երկրաբանական ուսումնասիրությունների Ծրագրով դաշտային պայմաններում նախատեսվում է իրականացնել.

- երկրաբանական հանույթ 1 : 2000 մասշտաբի,
- հորատանցքերի մեխ. սյունակային հորատում,
- հորատահանուկային նմուշարկում,
- լաբորատոր պայմաններում հանքաքարում օգտակար բաղադրիչների պարունակությունների որոշում,
- բնամասում հանքաքարի ծավալային զանգվածի և փխրեցման գործակցի որոշում,
- տեղագրամարկշեյդերական աշխատանքներ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/ վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

➢ մեքենաների տեխնիկական սպասարկման իրականացում՝ մասնագիտացված ընկերությունների տարածքում, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները յուղերի, քսայուղերի փոխարինման, պահպանման և պահեստավորման համար,

➢ կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարրաների մեջ և հետագա տեղափոխում մոտակա կազմակերպված աղբավայր, աղբահանության նպատակով համապատասխան ծառայությունների հետ նախատեսվում է կնքել պայմանագիր և կատարել համապատասխան վճարումները:

➢ կեղտաջրերի հավաքում բետոնապատ հորատիպ զուգարանում, որը պարբերաբար նախատեսվում է դատարկել հատուկ ծառայության ուժերով: Աշխատանքների ավարտից հետո դատարկված փոսը կլցվի քարերով, կծածկվի հողի շերտով,

➢ աշխատող մեքենայի շարժիչի կարգավորում՝ աղմուկի մակարդակի կարգավորման և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության նվազեցման նպատակով:

➢ տեղամասին մոտեցնող ճանապարհի ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղա-նակներին, հորատման հաստոցի հենք հանդիսացող մեքենայի տեղաշարժի ժամանակ, հորատման հարթակների տարածքի խոնավեցում՝ փոշեգոյացումը բացառելու նպա-տակով:

➢ խախտված տարածքների ռեկուլտիվացիա՝ երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո:

Ա. Բաղդասարյանը Ծրագիրը ներկայացնելուց հետո շնորհակալություն հայտնեց և ասաց, որ պատրաստ է պատասխանել հարցերին:

Ելույթ ունեցավ նաև «Կոմպոզիտ Մետալ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Վահան Զախարյանը.

Բարև ձեզ, ես ներկայացնում եմ «Կոմպոզիտ Մետալ» ՍՊ ընկերությունը և դրա նպատակները: Այսպիսով, ընկերության նպատակն է, ձեր համաձայնությունը ստանալուց և բոլոր իրավափաստաթղթային փուլերն անցնելուց հետո, ընդերքի ամբողջական շահագործումը, որի արդյունքում համայնքը հնարավորություն կստանա օգտվել ինչպես սոցիալական, այնպես էլ հստակ սահմանված իրավական կարգավորումներով այլ աջակցություններից: Հատկանշական է այն, որ այստեղ հարստացուցիչ ֆաբրիկա չի կառուցվելու, հանքաքարը վերամշակվելու է այլ վայրում: Շնորհակալություն, պատրաստ եմ պատասխանել հարցերին:

Հարց ուղղեց «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Նինա Մամաջանյանը, այն վերաբերում էր Արջուտի հանքավայրը շահագործող ընկերության և «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի միջև եղած կապին, որին ի պատասխան Վ. Զախարյանը պատասխանեց, որ հարաբերություններ կստեղծվեն վերամշակման հետ կապված: Լուսինե Սարգսյանը ներկայացրեց որոշ փաստեր «Կոմպոզիտ մետալ» և Արջուտի հանքավայրը շահագործող ընկերության սեփականատերերի մասին: Այնուհետև հարց ուղղեց Փամբակ համայնքի ղեկավար Ս. Կոստանդյանին նախորդ ընկերության մերժման ավագանու որոշման մասին, Ս. Կոստանդյանը պատասխանեց, որ այդ ընկերությունը ներկայացել էր որպես «Ասսաթ» ՍՊԸ-ի հետևորդ, սակայն միայն բանավոր կերպով, և նիստի ընթացքում չբավարարվեց ավագանու հարցերի պատասխանները, որի հիմքով էլ ավագանին կայացրեց բացասական որոշում:

Հարց ուղղեց «Քաղաքացու ձայն» CV media-ի ներկայացուցիչ Լուսինե Սարգսյանը.

- Արդյո՞ք որևէ կապ կա «Ասսաթ» և «Կոմպոզիտ Մետալ» ընկերությունների միջև,- պատասխանեցին՝ ոչ: 2-րդ հարցը վերաբերում էր շրջակա միջավայրի և մարդկանց առողջության պահպանությանը, քանի որ տեղեկացվեց, որ վերցվել են լաբորատոր փորձանմուշներ, որի արդյունքում բնակիչների օրգանիզմում հայտնաբերվել են ծանր մետաղներ:

Հարցին պատասխանեց Ա. Բաղդասարյանը, նշելով, որ Ծրագիրը բաղկացած է լինելու երեք մասից՝ դաշտային աշխատանքների բուն ծրագիր, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության և թափոնների կառավարման պլանի կազմում, որոնք փորձաքննվելու է համապատասխան լիազոր մարիմինների կողմից, որտեղ հստակ նշվելու են բոլոր բնապահապանական ռիսկերը և դրանց վերացման ուղիները: Ըստ վերոնշյալ փաստաթղթերի ընկերությունը պարտավորվում է պարբերաբար կատարել մշտադիտարկան աշխատանքներ և սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների շեղման դեպքում իրականացնել համապասխան աշխատանքներ, ինչն էլ հսկվելու է տեսչական մարմինների կողմից: Այս գործընթացը իրականացվելու է նաև հետագայում՝ նախագծման և շահագործման փուլում:

Լուսինե Սարգսյանը շարունակեց միտքը, որ այնուամենայնիվ նախորդ կազմակերպության գործունեության արդյունքում հասցվել է որոշակի վնաս և ինչպես է այս ընկերությունը պատրաստվում կոմպենսացնել այն: Հարցին միջամտեցին բնակիչները՝ հայտնելով, որ իրենք դժգոհություն չունեն նախորդ ընկերության վերաբերյալ, ունեն աշխատատեղեր, նշեցին համայնքի համար կատարված որոշ աշխատանքներ: Ցանկություն հայտնելով՝ կրկին տեսնել այդ կազմակերպությանը:

Հարցին ի պատասխան «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Զախարյանը հայտնեց, որ իրենք հայտ են ներկայացրել 3-րդ անձով կամ ՍՊԸ-ներով չծանրաբեռնված հանքավայրի նկատմամբ և իրենք չեն քննարկում նախկին ընկերության գործունեությունը, այլ ներկայացնում են իրենցը: Հավելեց, որ իրենք նույնպես պատրաստ են ամեն կերպով աջակցել համայնքին և բնակիչներին, իրականացնել սոցիալական ծրագրեր, ապահովել աշխատատեղեր, շրջակա միջավայրի վրա ազդեցությունը հասցնել նվազագույնի:

Ս. Կոստանդյանը հավելեց, որ իրենք նույնպես չունեն դժգոհություն «Ասսաթ» ՍՊ ընկերության նկատմամբ, իսկ այս հանրային լսումը կազմակերպել է օրենքի պահանջներին համապատասխան:

Ելույթ ունեցավ «Ասսաթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, նշելով, որ «Ասսաթ» ՍՊԸ-ն ս.թ. մայիս ամսվա ընթացքում ներկայացրել է երկարաձգման դիմում. այն մերժվել է, այնուհետև ներկայացրել է բողոք, որի քննումը գտնվում է ընթացքի մեջ: Ներկայացրեց նաև, որ ս.թ. հոկտեմբերի 1-ին «Մասիս Փլանթ» ՍՊ ընկերությունը հայց է ներկայացրել դատարան, ըստ որի պահանջվում է համայնքի ավագանուն պարտավորեցնել չիրականացնել որևէ որոշում, որը կարող է այլ ընկերության համար հիմք հանդիսանալ հանքավայրի շահագործման իրավունք ստանալու համար:

Վ. Զախարյանը ևս մեկ անգամ նշեց, որ իրենք ցանկանում են գործունեություն իրականացնել 3-րդ անձով կամ ընկերությամբ չծանրաբեռնված տարածքի նկատմամբ՝ օրենսդրական պահանջների շրջանակում: Այս պահին հանրային լսման իրականացման որևէ արգելք չկա, և ընձեռնված իրավունքից օգտվելով՝ ներկայացվում է երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստանալու մասին հայտ ու բնակիչների հետ ակնկալվում է առողջ բանակցություն: Ս. Կոստանդյանը էլ հավելեց, որ «Մասիս Փլանթ» ՍՊԸ-ի դատական հայցը անհասկանալի է համայնքի ավագանու համար, քանի որ, ինչպես արդեն նշվել է, նրանք նիստի ընթացքում չեն բավարարել ավագանու հարցադրումներին: Բնակիչների՝ իրենց ձայնը լսելի լինելու, պահանջին ի պատասխան Ս. Կոստանդյանը նշեց, որ կկազմվի հանրային լսման արձանագրությունը, որը հասանելի կլինի բոլորին, ինչից հետո հաշվի առնելով բոլորի կարծիքը կտրվի որոշում:

Բնակիչների մտահոգությունը աշխատատեղերը կորցնելու վերաբերյալ փարատեց ընկերության ներկայացուցիչ Վ. Զախարյանը, հայտնելով, որ ընկերությունը չի պատրաստվում կրճատել աշխատատեղերը կամ համայնքի աջակցությունը, այլ հակառակը հնարավորության դեպքում կընդլայնի այն:

Բուռն քննարկման ընթացքում հանրային լսման մասնակիներից ոմանք, առանց որևէ բացատրության, հայտնում էին իրենց անհամաձայնությունը որևէ նոր ընկերության՝ հանքավայրի շահագործման հետ կապված, որից հետո Ս. Կոստան-

դյանը շնորհակալություն հայտնեց ներկաներից, համարեցին հանրային լսումն ավարտված, տեղեկացվեց նաև, որ կկազմվի հանրային լսման արձանագրությունը, որը հասանելի կլինի բոլորին, ինչից հետո հաշվի առնելով բոլորի կարծիքը կտրվի որոշում: Նա ևս մեկ անգամ նշեց, որ հանրային լսումը կազմակերպվել է օրենքի շրջանակներում, որը և իրենք անհրաժեշտության դեպքում կիրականացնեն նաև մյուս ընկերությունների համար, այդ թվում նաև «Ասսաթ» ՍՊԸ-ի:

Փամբակ համայնքի ղեկավար Ս. Կոստանդյան

Հանրային լսման վարող,
Քարաբերդ բնակավայրի վարչական
ղեկավար Յու. Շավելյան

«Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Զախարյանը

«Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ա. Բաղդասարյանը

Հանրային լսման արձանագրող՝ Ռ. Մինասյան